

և Ուրբաթ (52 Չորեքշաբթի + 52 Ուրբաթ = 104), սակայն չպիտի մոռանանք որ (ա) Սուրբ Ծննդեան օրից անմիջապէս զկնի «ուտիք է մեզ 8 օր անմիջոց», այսինքն՝ այդ ութօրեայ ժամանակամիջոցի մէջ Չորեքշաբթին և Ուրբաթն ուտիք է մեզ = 2 օր, և (բ) Սուրբ Զատիկի օրից յետոյ «ուտիք է մեզ մինչև ցՀամբարձումն», այսինքն այդ քառասնօրեայ ժամանակամիջոցին մէջ ունինք բոլորն ի միասին, 11 Չորեքշաբթի և Ուրբաթ, որք պահնց օրեր լին: Ուտի, (ա) 2 օր + (բ) 11 օր = 13 օր, զոր զեղչելով 104ից, մնում է 91 օր: Սրտաբոյ քան այդ 91 օր Չորեքշաբթի և Ուրբաթ օրերէն, ունինք այլ ևս ուրիշ դուռ 66 պահոց օրեր միայն (որպէս ունինք տեսանել) = 157 պահոց օրեր, ընդ ամենայնն առ տարին:

Մեր կանոնական պարբերական պահոց աւուրքն են:—

(ա) Հնգօրեայ: 1, Առաջաւորաց. 2, Եղիական. 3, Սուրբ Լուսաւորչի (Գիւտ Նշխարացն). 4, Վարդապետի. 5, Ս. Աստուածածնի (Վերափոխումն). 6, Սուրբ Խաչի (Խաչվերաց). 7, Վարազայ Սուրբ Խաչի. 8, Յիսնակաց. և 9, Սուրբ Յակովբայ: Ուտի, 5x5 = 45 օր	
(բ) Սուրբ Մննդեան Պահ: 7 »	
(գ) Մեծ Պահ: 48 »	
Համագումար, 100 »	

Ասացինք որ արտաբոյ քան Չորեքշաբթի և Ուրբաթ օրերէն, ուրիշ պահոց օրերն ոչ են յաւել քան 66, որոյ առ պահոց պարտինք բացատրել որ բոս ուրում վերջիչեալ մետասան պարբերական Պահքերն (100 օր) բովանդակում են տասն Շաբաթապահոց մէջ զիպիլի տասն Չորեքշաբթի և տասն Ուրբաթ օրերն (= 20 օր), և Մեծ Պահոց մէջ և՛ Չորեքշաբթի և և՛ Ուրբաթ օրերն (= 14 օր), ուտի 20 + 14 = 34 զեղչելով 104ից = 66:

Եզրակացութիւն	Որ
Չորեքշաբ. և Ուրբ. օրեր, առ տարին, 104	
Տասն Շաբաթապահ. (ինն հնգօրեայ և [մի և՛ չորեայ]), 52	
Մեծ Պահք	48
Համագումար, 204	
Գրեմք որ վերջիչեալ Չորեքշաբթի և	

Ուրբաթ օրերից ամանք արդէն բովանդակուած են տասն Շաբաթապահոց մէջ (= 20 օր) և ամանք Մեծ Պահոց մէջ (= 14 օր): Յետոյ ունինք 13 օր ուսի՛ք Չորեքշաբթի և Ուրբաթ: Ուտի 20 + 14 + 13 = 47 պիտի զեղչենք համագումարիցն, այսինքն 204—47=157 օր, որպէս ամբողջութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ Պահոց աւուրքն առ տարին:

Լոնգոն

Ս. Տէր Մ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԳՐԻԳՐԻՈՅ ԿՈՓՈՂԻԿՈՍՆԵՐԸ

Ա.

ԳՐԻԳՐ ՄՈՒՍԱՐԷԿԵԱՆ

(1119-1151?)

Վերջին Լեւոնի թագաւորութիւնը հազիւ տեսած էր տարի մը 1374-75 (+ 1313) իսկ թագաւորական շրջանին վերջին կաթողիկոսն էր Պօղոս Ա. Սսեցի (1374-82):

Պօղոսէն ետքը, Կիլիկիոյ վերջնական Լորձանման շրջանին, վեց կաթողիկոսներ յաջորդեցին իրարու, 1382էն մինչև 1439 (Թեոդորոս Բ., Կարապէս Ա., Յակոբ Գ., Գրիգոր Ը., Պօղոս Բ., և Կոստանդին Զ.), և 1439-ին կաթողիկոսական աթոռին վերայ կը գտնենք Գրիգոր Թ. Մուսարեկեանը:

Մուսարեկեանի անցեալին վրայ պատմական օրեւէ զոհացուցիչ տեղեկութիւն չէ հասած մեզի:

Թովմա Մեծփեցին, որ 1441-ին էջմիածնի աթոռին վերահաստատութեան շարժումին պարագլուխն է, իրրեւ ժամանակակից պատմագիր, զրելու ատեն այդ շարժումին պատմութիւնը, տեղեկութիւններ մը կուտայ Մուսարեկեանի և անոր յաջորդ Կարապետ Եղոկացիի մասին: Բայց անաչառ և անկողմնակալ պատմագրող մը չէ Մեծփեցին. և այնքան թշնամանքով և տխուր գոչներով կը նկարագրէ Կիլիկիոյ աթոռին ղէպքերն ու ղէմքերը որ իրաւունք կուտայ մեզ վերապահութեամբ օգտուիլ իր տեղեկութիւններէն:

Մեծփեցին սաչափ միայն կը զրէ Մուսարեկեանի մասին. — «Տէր Կոստանդին կաթողիկոսն Սոայ գնաց առ Աստուած (Կակնարկէ Կոստանդին Զ. Վահկացիին 1430—39). և Գրիգոր անուն Եպիսկոպոս մի գնեն կաթողիկոս»:

և նա ինչոյն աւուրքն եօթն (ուրիշ օրինակ ներհինգ) նոր եպիսկոպոս ձեռնադրէ. և կոչն արեւցող երէց մի որ զԲրիտանոս պատարագէ: Եւ նոր եղեալ կաթողիկոսն ոչ իշխէ, զի բազայս անուղղայս եղեալ ունէր ի վերայ ինքեան: (Թմ. Մեծ. Բ. Յշտիրն. էջ 63):

Մեծոփեցին այս ծանր դիտողութիւնները կ'ընէ առանց որակելու. չըսեր թէ ո՞վ էր Մուսարէկեան Գրիգոր, որո՞նք էին անոնք որ կաթողիկոս դրին զայն. չի բացատրեր մեզ թէ ի՞նչու համար կաթողիկոս մը իրաւունք պիտի չունենար եպիսկոպոսներ ձեռնադրելու նոյն օրերուն, և վերջապէս չի պարզեր թէ ի՞նչ էին անուղղայս բաղայք ըսուածները, որոնց պատճառաւ իրբեւ թէ Մուսարէկեան ինքն անհամբ չէ համարձակած պատարադ ընել, և կարծես դիտմամբ կանչած են արեւցող քահանայ էր, որ եպիսկոպոսներուն ձեռնադրութեան օրը սուրբ պատարագ մատուցանէ:

Պատմութեան մէջ չեն արդարանար այսպիսի ձրի հաւաստումներ, որոնք չեն բացատրուած:

Ասոր հակառակ ՊԶԼ=1439, Նշմբ. 7 ին Կաֆայի մէջ գրուած Աւետարանի մը յիշատակարանին մէջ Մուսարէկեան կը բարացուցուի իրբեւ քահանայ, աստուածասէր և իմաստուն (Նոսար Զայոց, էջ 119): Իսկ մեր Օրմանեան Սրբազանն ալ, որ մասնաւոր տկարութիւն մը ունի իր չհամակրած գէմբերը սեցնելու և համակրածներն ալ չափէն աւելի գեղեկեցնելու, երբ մէկ կողմէն Մուսարէկեան մականունէն կը հետեցնէ «Գրիգոր կաթողիկոսին իշխանազուն մը ըլլալը», միւս կողմէն չափէն աւելի տարուելով Մեծոփեցիի գրուածներէն, «բնաւ նշանակութիւն չունի» կ'ըսէ քահանայ, աստուածասէր և իմաստուն «կաթողիկոսաժայել ամականներ»ը (Ազգայն. էջ 2091): Մինչ պէտք է գիտել որ այդ յիշատակարանը զբոց Կաֆայի Մաղաքիա արեղայ անկախ և անկողմնակալ գրիչ մըն է, և կը յայտնէ ազգովին կազմուած գրահաստում մը. իսկ Մեծոփեցին, որ շարժում մը պարագլուխն է, կ'արտայայտէ կողմնակալ պատմագրի մը զգացած դայրոյթը:

Մուսարէկեանի կաթողիկոսութիւնը նշանաւոր եղաւ այն պատճառաւ որ իր

աթոռակալութեան առէն վերահաստատուեցաւ էջմիածնի աթոռը և Կիրակոս Վերապեցին կաթողիկոս բնորոշեցաւ այդ աթոռին (1441), ինչպէս կ'ենթադրեմ ես՝ Մուսարէկեանին իսկ հաւանութեամբը:

Այս ենթադրութիւնը կ'ընեն՝ հիմնուելով այն իրողութեան վրայ թէ արեւելեան վարդապետներ նամակ գրեցին Մուսարէկեանին և հրաւիրեցին զինքն էջմիածին որ զայնքն նստի իր բուն տեղւոյն վրայ վերահաստատուած աթոռը. բայց Մուսարէկեան մերժեց այդ հրաւերը, և անկէ ետքն է որ բնորոշեցաւ Կիրակոս Վերապեցին (*):

Եւ ստուգել, հակառակ Մեծոփեցիի լուծական, խելքի գէմ է կարծել որ արեւելցիք առանց նկատի առնելու Մուսարէկեանի կաթողիկոսութիւնը, ելան ուղղակի նոր կաթողիկոս մը ստեղծեցին:

Մենք արդէն մեր Ընդհանուր Ակնարկին մէջ գիտել տուինք թէ կաթողիկոսութիւնը Կիրիկիոյ մէջ, իրբեւ հետեւանք լատին շփումին, իր հմայքը կորսնցուցած էր արեւելեան վարդապետներու աչքին: Անոնք շատոնց կը մտածէին, կը ծրագրէին, մահաւանդ Կիրիկիոյ թագաւորութեան քննութիւնն էր, կաթողիկոսական աթոռը վերահաստատուել արեւելեան Հայաստանի մէջ: Ասիկա խնդրին մէկ կողմն է. միւս կողմէն քաղաքական կացութիւնը այնքան անտանելի եղած էր Կիրիկիոյ մէջ, երկրին կործանման հետեւանքով, որ նոյն ինքն կաթողիկոսներ չէին կրնար հանդուրժել այդ գծնդակ կացութեան, նշաւակ ըլլալով արտաքին և ներքին դաւաճանութիւններու:

(*) «Սմին իրի գրեցին եպիսկոպոսունք և վարդապետք առ Գրիգոր Մուսարէկեանց, և հրաւիրեցին զայն էջմիածին, եղեալ նմա առաջի բազում յարգութեամբ բազմապատիկ պատճառաւ: Այլ իրբեւ չէառ նա յանձն զայն անգործ, այնուհետեւ խորհեցան առաջնորդք ազգին մեծ ժողով գումարել էջմիածին, և ի ձեռն ժողովոյ վճարել զիրան, (Չամչ. Գ. 486): — Մեր մատենագրարանի թիւ 462 Ձեռագրին մէջ Կ. Պոլսեցի ձեռագրիչն Մաղաքիա Դպիրն ալ, 1713 ին, կը գրէ. — «որոյ ժամանակի վարդապետք և եպիսկոպոսք արեւելեան իշխանօք իւրեանց կոչեն զՏէր Գրիգոր զայն նստել էջմիածին. և իրբեւ գիտացին թէ ոչ կամի զայն, մինչդեռ նա կայր անդ, բուն աթոռն ի Սիւս, կենդանի, օրհնեցին և եպիսկոպոս Կիրակոս Վերապեցին կաթողիկոս էջմիածնի. և այս եղև յամի Տեառն 1441 և չայոց ՊՂ. Թուին»:

և յաճախ թունաւորումով կը կրճատուէր իրենց կեանքը: Այս վիճակին մէջ շատ նշանակելի է Կարապետ Ա. Կեղեցիին (1393-1404) շարժումը, որ արեւելեան վարդապետներու հետ խորհրդակցելով՝ կ'ուզէր թողուլ Սիւր, անցնիլ Աղուանք և հոն հաստատուիլ, Լուսաւորիչի թոռան Գրիգորի աթոռին վրայ:

Այդ ծրագիրը չբաւեց, և վերջապէս արեւելեան վարդապետք յաջողեցան վերահաստատել Լուսաւորիչի աթոռը Էջմիածնի մէջ, 1441-ին, երբ ասդին, Սիւրի մէջ կաթողիկոս օծուած էր Գրիգոր Խ. Մուսարէկեան, 1439-ին, և անշուշտ, ինչպէս որ դիտել տուինք վերեւ, նոյն ինքն Մուսարէկեանի հաճութեամբ: Ասիկա պատմական դէպքերու տրամաբանական ընթացքն է: Վասնզի արեւելեան վարդապետներու բուն նպատակն էր ո՛չ միայն Կիլիկիոյ վտանգաւոր միջավայրէն ազատել Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը, այլ նաեւ կաթողիկոսական միակ արդու մը ունենալ, Աղթամարի կաթողիկոսութիւնն ալ վերցնելով. նպատակ մը, որուն հաւանած էր Աղթամար, որու կաթողիկոսն էր 1441 ին Չաքարիա Գ. (1434-64): Մենք կ'ենթադրենք որ Մուսարէկեան ալ հաւանած էր, պայմանաւ որ իրեն չդաշին, այլ ինքն մնայ Կիլիկիոյ աթոռին վրայ մինչեւ իր մահը, և յետոյ դադրի կաթողիկոսութիւնը Կիլիկիոյ մէջ: Հաւանաբար ա՛յս է պատճառը այն ընդհատին, որ կը բաւուի Մուսարէկեանի և Կարապետ Եղոկացիի միջեւ, ինչպէս պիտի տեսնենք այս վերջնոյն վրայ գրելու ատեն:

Բայց խնդիր է գիտնալ թէ ինչո՞ւ համար Մուսարէկեան մերժեց Էջմիածին երթալու հրաւերը:

Ըստ իս մէկէ աւելի է Մուսարէկեանի մերժումին պատճառը, և ատենց ամէնէն կարելորդ սա՛ է հաւանաբար. — Մուսարէկեան թերեւ ծեր էր և չուզեց շարժիլ իր տեղէն, մա՛նաւանդ երբ տեսաւ որ Կիլիկիոյ եպիսկոպոսներէն չոքը, ըստ Մեծօփեցոյն, ինքիսին կողմանց, չուզեցին զինքն, և նամակներ գրեցին արեւելեան վարդապետներուն և նոյն ինքն Մեծօփեցիին ալ, չարախօսութիւններ ըրին իր մասին, և Մուսարէկեան մնաց Սիւր ընկճելու համար իր հակառակորդները և թերեւ նաեւ

չուզեց թափուր աթոռ մը թողուլ անոնց առջեւ . . . Էջմիածին երթալով:

Ասիկա շատ հաւանական կը թուի ինձ, քանի որ կաթողիկոսական աթոռին ապահովութեան և միութեան վրայ էր խնդիրը, Մուսարէկեան յիմարին մէկը եղած պիտի ըլլար մերժելով այնքան պատուաբեր հրաւեր մը: Ինչպէս դիտել տրւինք, Աղթամարի Չաքարիա Գ. կթղկան. ալ հաւանած էր ո՛չ միայն Էջմիածնի աթոռին վերահաստատութեան, այլ նաեւ աթոռին միութեան: Անոր ալ մահէն ետքը այլեւս նոր կաթողիկոս մը պիտի չընտրուէր:

Բայց երբ արժանընտիր Վիրապեցին Կիրակոս զոհուեցաւ փառասէր եպիսկոպոսներու դաւանքին, խախտեցաւ ամէնուն հաւատքը արեւելեան վարդապետներու անկեղծութեան վրայ, և ասոր հետեւանքով Աղթամար անմիջապէս չեղեալ համարեց իր համաձայնութիւնը, նոյն ինքն Չաքարիա Գ. ի ատեն, որ շատ կարող անձ մըն էր. իսկ Կիլիկիոյ մէջ Կարապետ Եղոկիացին յերեւան եկաւ և վերահաստատեց Մուսարէկեանի յաջորդութեան գիծը:

Էջմիածնի աթոռին վերահաստատութեան առթիւ, Լուսաւորիչի Աջին Սիւրի մէջ անյայտանալուն կամ զոհուելուն խնդիր մը յուզուեցաւ, և այդ պատճառաւ Մուսարէկեան և իր եպիսկոպոսները շատ նեղութիւն կրեցին Աւետարանի մը յիշատակարանին համեմատ, զոր գրած է Դաւիթ Եպիսկոպոս մը ՊՂ. = 1441-ին Քարերդի մէջ, — «Ի հայրապետութեանց Տեառն Գրիգորի կարողիկոսի ամենայն Հայոց, ի սուրանութեան եպիսկոպոսոց, և յաշխարհակարութեանն Մելիք Տաւրի, որ մականունն Չախմախ կոչի, ի դատն և ի իննդ ժամանակի, յայլասեռից ազգի, որ կէսքս ի սովոյ յաշխարհէ յայլ գաւառ վտարին, և կէսքս յեղբարց և ի մարց բաժանին: Եւ այսմ ամբ դարձեալ այլ իմն պատահումն հանդիպաւ Հայոց ազգիս: Քանզի աչ սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, որ կայր հիմի բանի ժամանակ ի Սիւրաղաբի, որ յաւթարհին Կիլիկիոյ, անյայտ եղեւ. ո՛չ գիտեմք թէ զոգացան և ո՛չ գիտեմք ի՞նքն զինքն ծածկեց: Եւ ի մեծ նեղութիւն կան և ի արտոմութիւն Հայոց ազգս վասն այս պատճառի: Եւ զկարողիկոսն Տէր Գրիգոր բազում չարարեցին և այլ եպիսկոպոսք ընդ նմա վասն Աջին Լուսաւորչին, և ոչ զաին, զոր, յուսամք յամենազօր Հոգին Աստուած, զի յայտեսցէ զմեզ Սուրբ Լուսաւորչին մերոյ ի ձեռն ընտրելոյ

և արդարոյ տուն միոյ» (*), և այլն:

Դաւիթ Կաթ. Խարբերդի մէջ բան մը լսել է Սիսի մէջ կատարուած զէպքի մը մասին և յիշատակագրած է զայն իր բն-
գործինակած Աւետարանին մէջ. բայց իր տեղեկութիւնները այնքան ոչ-զբական են որ կարելի չէ Աջին պատահարը մեկնել. թէ և մենք փորձել ենք մեկնութիւն մը ուրիշ տեղ (Տե՛ս Թէոդիկի 1927ի Ասկնուն Տարեցոյցը, էջ 492) բայց ո՛չ վճռօրէն:

Այս պատմութեան մէջ ուշագրաւ է Մուսարէկեանին և իր եպիսկոպոսներուն չարչարուիլը (նեղութիւն կրելը) կիլիկեցի-
ներէն, հաւանարար անոնց կողմէն որ կ'ու-
զէին պահել Ամենայն Հայոց Կաթողիկո-
սութիւնը Սիսի մէջ և կը հակառակէին Ա-
թոռին վերահաստատութեան էջմիածնի
մէջ, և թերեւ այս հակառակութիւնն ալ
պատճառ եղաւ որ Մուսարէկեան չշարժի
իր տեղէն:

Մուսարէկեանի կը վերագրուի նամակ մը ուղղուած Եւզինէոս Գ. պապին: Նամակին լատիներէն օրինակը պահուած է եղեր Մէ-
տիչէական - Լաւրենտեան Մատենադարա-
նը, և Պալճեան գրաբարով հայացուցած է
զայն և հրատարակած (Պսմ. Կրդ. Վրդ. Ի
Հայս, էջ 149-51):

Նամակին թուականն է 1450, Սեպտմ.
4: Եւ որովհետեւ սովորական ցուցակներու
մէջ Մուսարէկեանին մահը կը նշանակուի
1447ին, Պալճեան կ'առաջարկէ ուղղել զայն,
ըստ այդ թուականին բայց ինքն չ'ուղղեր:

Այդ նամակը Գրիգոր Կաթողիկոսի մըն
է, բայց յայտնի չէ թէ ո՞ր Գրիգորին. ա-
ւելի ուշագրաւ է որ նոյն իսկ յայտնի չէ
թէ ո՞ր տեղէն գրուած է նամակը, և ո՞ւր
մնացած է ատոր հայերէն բնագիրը. վեր-
ջագէս կը պակսին վաւերականութեան ա-
պացոյցները (**):

(*) Տե՛ս ՆՕՏԱՐԲ ՀԱՅՈՅ փրդալէմեանի էջ 125:
Այս Աւետարանին տէրն է Հալէպի առաջնորդ
Արտաւազդ Վրդապ. որուն յիշատակարանը օրի-
նակել տուաւ ինձ համար: Փրդալէմեան,
Թիւրք գրաքննութեան սարսափին տակ, ինչ
ինչ բռնեւոր տեղ կէտեր զրած է, և իր բն-
գործինակութիւնն ալ շատ խնամքով չէ ըրած:
Մենք այս մէջերու մը ըրինք Արտաւազդ Վրդի-
նցօրինակութիւնէն:

(**) Թէ և Բատկարեան կը հաւատարէ թէ այդ
Վեղապէսին հին թարգմանութիւնը՝ Կաթողիկոսին

Եթէ Պալճեանի հետ պահ մը ընդու-
նինք թէ այս նամակը գրողն է նոյն ինքն
Մուսարէկեան Գրիգոր, այդ պարագային
հետաքրքրական են ատոր մէջ նշանակ-
ուած քանի մը պատմական տեղեկութիւն-
ներ:

Գրիգոր Նախ կ'ըսէ պապին թէ շատ վար-
դապետներ ու եպիսկոպոսներ կ'ուզէին զրկել
ձեզ, բայց չկրցայ երկուքէն աւելի զրկել յեր-
կիւղի աննաւասից. երկրորդ՝ թէ ձեր պատգա-
մաւորը՝ եղբայր Ալեքսանտրոս՝ եկաւ մեզի երբ
մենք Գահիրէ կը գտնուէինք. երրորդ՝ թէ ձեր
նամակը, զոր ուղղած էիք Երուսաղէմի
Մարտիրոս Պատրիարքին, մենք կարգաւ
տուինք մեր առջեւ և հասկցանք ինչ որ
գրած էիք կարգաւու համար, «որ է զօգ
սիրոյ և միութեան», և վերջագէս Երուսա-
ղէմի Մարտիրոս եպիսկոպոսի հասցէին ուղղ-
ուած նամակը Գրիգոր կթղս. ինքն բանալ
տուեր է այն իրաւունքով որ «Եւ, կ'ըսէ,
ի վերայ աննաւայն եպիսկոպոսաց և վարդա-
պետաց, ևս և յերուսաղիմացոց աշխարհի
աննաւան կարողիկոս կարգեալ եմ»:

Անհաւանական չենք զտներ որ Մու-
սարէկեան նամակ զրած ըլլայ Հոռոմ: Ա-
սիկա նորութիւն մը չէ Կիլիկիոյ, ինչպէս
նաև յետոյ՝ էջմիածնի Կաթողիկոսներու
գործառնութեանց մէջ:

Ընդունելով որ Մուսարէկեանն է նա-
մակագիր Գրիգոր Կաթողիկոսը, այդ նա-
մակին թուականը, 1450 Սպտմ. 4, կրնայ
կոտան մը ըլլալ մեզ ճշդելու Մուսարէկեա-
նի մահուան թուականը, 1450-ին վերջը կամ
1451-ին սկիզբը զնելով զայն: Վասն զի—,
Ալիշանի գործածած ժամանակագրութեան
մը համաձայն—, Եւզոկացի Կարապետ կը
յաջորդէ Մուսարէկեանի՝ աթոռին մէկ տա-
րի՝ պարապութենէ ետքը (Եւզոկացիի յի-
շատակարանին համեմատ ճիճգ տարի է).
Իսկ Կարապետ 26 տարի Կաթողիկոսութե-
նէ ետքը կը վախճանի ԶԻԶ=1477 ին: Ա-
լիշան 26ը կը սրբազրէ և կ'ընէ 36, որ
սխալ է (Սիսուսն, էջ 539):

Արդ՝ 1477—26=1451. ուրեմն այդ ժա-
մանակագրին հաշուով Եւզոկացի Կարա-
պետին Կաթողիկոսութեան սկիզբն է 1451,
և ասիկա մօտիկ է Մուսարէկեանի վերա-

պատգամաւորներու «ինքնագիր ստորագրու-
թեամբը» վաւերացուած է (Եզդ. Պատ. էջ 247):

գրուած լատիներէն նամակի թուականին. (1450 Սպտմ. 4):

Մուսարէկեան կաթողիկոս եղաւ 1439-ին. իսկ 1441ին Վերապեցին ընտրուեցաւ Էջմիածնի վերահաստատեալ աթոռին, և որովհետեւ Կարապետի կաթողիկոսութենէն յառաջ ճնշամեայ ընդհատ մը կայ, 1451—5=1446/7, այսինքն՝ 1446/7ին Մուսարէկեան կամ մեռած պիտի ըլլայ և կամ քաշուած. մինչ իրեն վերագրած նամակին համեմատ Մուսարէկեան Եղիպտոս է 1450 Սպտմ. 4ին:

Ինչպէս կը տեսնուի, դեռ քննելի է Մուսարէկեանի կաթողիկոսութեան վերջը և Եւզովացիի կաթողիկոսութեան սկիզբը:

ՅԱՆՈՒՅ. — Վերապեցիին ընտրութեան հետեւանով Մուսարէկեանի կարողիկոսական դիրքին նկատմամբ Ազգապատումի մէջ Օրմանեան Սրբազանի յայնժամ կարծիքները չենք ուզեր քննել ճոս, զայն վերապահելով մեր գործին առանձին ընդարձակ հրատարակութեան:

ԲԱՐԿԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԱՐՏԱԳԱՆԿ ՍԻՈՆԻ

Վասն Սիոնի ո'չ լռեցից

Յ. ՍԻՈՆԻ մէջ յիշատակ մը ունենալ ամէնուն բաղձանքն էր ու պարտքը նուիրական, ու երբեք չմոռնալ ու չլռել, և ինչ ալ մը անի մոռնալ, լեզու մը անի չի բարբառեր, անէճքն էր որ կը փակցուէր այդ լեզուին ու աչին: Սարեբու, բլուրներու, հովտաց, դաշտերու, շուշաններու այդ մշտադալար սուրբ քաղաքը, Փրկչին Աստուածաշունչ օծումովը սրբազործուած և խաչին գնովը գնուած, այնչափ թանկ ու հանք Արգարութեան ձյմարտութեան կերտուածքովը արքանի ու անգնի, այո՛, քրիստոնէից սիրան ու հոգին իրենք միշտ ու իրմով բարխոյզ, պիտի փափաքի ուխտաւորներու բազմութիւնովը ու նուէրովը Սիոնի համար չլռել:

Երբ մենք ալ 50 տարուայ յուսիսէն մը վերջ Սիոնի բարբառը կ'ողջունենք և կը տեսնենք մեր պատուական ու բաղձադարեան Ս. Յակոբայ Վանքին, անշուշտ սրտի բերկրութիւնով է որ կ'ընդունինք զրին ու զրչին վերերիսմը: Գանի՛ սուրբ յիշատակներ ի մեզ կը զարթնուն Սարսի ծաղիկներովը պսակաւորած: Հայ գիրը, հայ գրելը մեծատառներու խաչ անկիւններուն մէջ ցնդին միտքը, զգացումը, ոգին զրի առին, գիրն ու գրականութիւնը մշակեցին, ցնդին կարողութիւնները, յատկութիւնները ի վեր հանեցին, սովորութիւնները, աւանդութիւնները զա-

սաւորեցին պահպանեցին, օտար դպրոցներէ մտքի պաշարներ ամբարեցին, իրրեւ ուրոյն ցեղի, ազգի ու ժողովուրդի պատմութիւնը ծանութացրին, ինչ որ կարեւորն է պահպանութիւն աւելն հարստութեան, մանաւանդ անմոռն ու անմէկին ըրին շատ անգամ անձուկ ու անյարմար պայմաններու տակ: Երուսաղէմը ոչ գրով ու բանիւ, այլ պատմական Ս. փայրի և տեղեաց պահպանութիւններու Ս. փայրի և տեղեաց պահպանութիւններու հարազատ շարունակողներու, շատ մեծ և գնահատելի ծառայութիւններ մատուցած է, ու դարեւոր այս շարունակութիւնը հայերգու սրտին ու ոգիին մէջ երախտագրութեան մեծ բաժին մը անուցած է ու ան երբեք պիտի չլռէ: — Վասն Սիոնի ոչ լռեցից: Եթէ Սիոնը — երեսաղէմ շատ նշանաւոր դէմքեր չէ հասուցած մատուցողական մակոյթի մարդին մէջ, բայց այլ մարդերու մէջ՝ որպիսին Սիոնի մէջ յիշատակ մը ունենալու ազնիւ պարտաւորութիւններովը անձինք ու բարեգործներ ունեցած է, որոնք իշխանափայլ նուէրներով փանքին փառքը ու յարգը և աշխատութիւնները բարձրացուցած և հասարակ իրաւունքներու ալ տէր ըրած են անշուշտ իմաստուն զեկափայտներու, հաւատարիմ սպասաւորողներու և անձնուէր գահակալներու ու ժրբաշան միաբաններու հոյը: Որչափ որ մատուցողական շատ խոշոր դէմքեր չեն փայլած, բայց հեղինակներ, բանասէրներ, բանահաւաքներ, մամուլով զբաղողներ ունեցած ենք. Սիոնը անով մեծ, յիշատակելի ու ժողովրդի սրտին խօսող ու ազդող պիտի մնայ, երբ ան պատիւը ունեցաւ Աստուածորդին իր ծոցին հիւրընկալիլու: Սիոնը պիտի մնայ յիշատակելի, և սրտեր ու հոգիներ անոր կապուած և պարտաւորած պիտի մնան իրենց կեանքին գնովը, և ընել այն ամէնը, որ իրենց պարտաւորութեան բաժինն մէջ կ'ըլլայ ուղիակին: Հողիներու փրկութեան կոթողը, Գողգոթան, իրեն պիտի ձգէ իսպին աշակերտողները ըստ այն ճշմարտութեան թէ՛ ո'ր ինձի աշակերտել կ'ուզէ իսպը առած իմ ետեւս գալու է, անձնուէրութեան ու զոհողութեան իսպը: Քիչ չեն եղած հայ խաչ տանողներ խաչեցելոյն օտքին և քիչ չեն եղած հոգիներ՝ որ հոգիներու հայրենիքին երեսաղէմին սրտովին պաշտանք ունեցին են. ու հիմա՞կ է որ պիտի լռեն հոգիները նախնեաց ոգիներովը թրծուն և օծուն և պիտի չբերեն Սիոնի յիշատակ մը ու պիտի լռեն, ո'չ: Հոգեկան մեծ զուարճութեան ու ազդեցութեան տակ կը գտնուինք կարգալով ու իմանալով Ս. Մենաստանին, Ս. Վայրերու յատաչգիմութիւնը թէ՛ տնտեսապէս և թէ՛ մանաւանդ բարոյապէս, որուն մէջ գրականը, կրթականը, մտաւորականը, յառաջգիմութեան փուլին ու այս երբորգութիւնը պիտի բերէ փայլ մը ևս հոս այդ հարստութեանը: Արդի գահակալին, գրական մեծ դէմքին, ներկայութիւնը արդէն գրաւականն է թէ մարդ մշակողը զարթած՝ հոգակաւոր փանքերու շարքին պիտի թուէ հոգակալն Ս. Յակոբն ալ, և այն պակասը որ բաւական մը նուագեցուցած էր կրթականին արժէքը, հիմակ պիտի